

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ (ՔՈԼԵՋԻՑ) ՈՒՍՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը (ՀՊՏՀ) հայտարարում է միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների (քոլեջի) բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների 2019-2020 ուսումնական տարվա ընդունելություն (հեռակա ուսուցմամբ)՝ ուսումը ՀՊՏՀ հետևյալ մասնագիտություններով շարունակելու համար.

h/h	Մասնագիտության ծածկագիրը	Մասնագիտության անվանումը	Տեղերի քանակը (հեռակա)
1	041101.01.6	Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)	20
2	041201.01.6	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	20
3	041301.01.6	Կառավարում (ըստ ոլորտի)	20
4	041401.01.6	Շուկայագիտություն (մարքեթինգ) (ըստ ոլորտի)	10
Ընդամենը			70

ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ

h/h	Մասնագիտության ծածկագիրը	Մասնագիտության անվանումը	Տեղերի քանակը (հեռակա)
1	041201.01.6	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	5
Ընդամենը			5

ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղ

h/h	Մասնագիտության ծածկագիրը	Մասնագիտության անվանումը	Տեղերի քանակը (հեռակա)
1	041301.01.6	Կառավարում (ըստ ոլորտի)	4
Ընդամենը			4

Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են 2019թ. հուլիսի 4-ից մինչև հուլիսի 21-ը և 2019թ. օգոստոսի 19-ից մինչև օգոստոսի 30-ը ներառյալ՝ ժամը 9⁰⁰ - 17⁰⁰ -ը:

Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

1. դիմում՝ ուղղված ռեկտորին,
2. ավարտական փաստաթղթի բնօրինակ՝ դիպլոմ և դրա ներդիր,
3. ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի արձանագրության պատճեն կամ երաշխավորագիր,
4. չորս լուսանկար (3x4 չափսի),
5. անձը հաստատող փաստաթուղթ և դրա պատճեն,
6. զինվորական գրքույկ կամ կցագրման վկայական և դրա պատճեն,
7. ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնությունից օգտվելու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ (առկայության դեպքում):

Ընդունելությունն իրականացվում է ՀՀ Կառավարության 2015թ. հուլիսի 8-ի «Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի մայիսի 20-ի N 589 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 752-Ն որոշման համաձայն:

<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=99035>

Դիմորդների փաստաթղթերի ընդունումը կատարվում է ՀՊՏՀ համապատասխան ընդունող հանձնաժողովներում, որոնք աշխատում է բոլոր օրերին՝ ներառյալ տոն և հանգստյան օրերը, ժամը 9⁰⁰ - 17⁰⁰–ը:

Հասցեներ՝ ք. Երևան, Նալբանդյան 128 (Ֆինանսական ֆակուլտետի 1-ին հարկ),

հեռ.՝ (+374 10) 593-473

ք. Գյումրի, Վ.Սարգսյան 32, հեռ.՝ (+374 312) 2-54-10

ք. Եղեգնաձոր, Վայքի փողոց 4, հեռ.՝ (+374 281) 2-54-10